



Աշխատանքային այցով Ջավախքում գտնվող Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, հավատարիմ ընդհանուր առաջնորդական փոխանորդության գյուղերից մեկում Սուրբ Պատարագ մատուցելու որդեգրած իր առաքելությանը, 2018 թվականի հունվարի 28-ին այցելեց Ախալքալաքի շրջանի Արագովա գյուղ:



Օրը տոնական էր, տեղի Սուրբ Գևորգ եկեղեցին բազմամարդ էր: Թեմակալ առաջնորդին դիմավորելու և նրա օրհնությունը ստանալու էին եկել ոչ միայն Արագովայի հավատացյալները, այլև շրջակա գյուղերի բնակիչները, «Խրիմյան հայրիկ» նախակրթարանի աշխատակիցները, ծնողներն իրենց երեխաների հետ:

Վիրահայոց թեմի առաջնորդը մատուցեց Սուրբ Պատարագ, որին մասնակցում էին առաջնորդի օգնական բարեշնորհ Գևորգ սարկավազ Անտոնյանը և Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու դպրաց դասը: Պատարագն ուղեկցվեց երգչախմբի կատարումներով, որը երեցկին Նարինե Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ, կազմավորվել էր «Խրիմյան հայրիկ» նախակրթարանի նախորդ տարիների սաներից: Ինքնատիպ և հուզիչ էր Պատարագի արարողությունը, քանզի մի կողմից հնչում էին շարականները, մյուս կողմից լսվում էր իրենց ծնողների, տատիկ-պապիկների հետ եկեղեցի եկած մանուկների ձայնը:



Հընթացս Սուրբ Պատարագի՝ Վազգեն Սրբազանը քարոզ խոսեց, որի բնաբանն էր "Թույլ տվեք այդ մանուկներին, որ ինձ մոտ գան , և մի արգելեք նրանց , որովհետև այդպիսիներինն է Աստծո արքայությունը..." (Ղուկ.18.16), հավուր պատշաճի մեկնաբանեց

քարոզի խորհուրդը:

Սրբազան հայրն օրհնեց եկեղեցում ներկա մանուկներին ու նրանց ծնողներին՝ իրենց երեխաներին մանկուց սրբազան արարողություններին մասնակից դարձնելու, եկեղեցուն և հավատքին մոտեցնելու համար: Թեմակալ առաջնորդը բարձր գնահատեց Արագովայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանի գործունեությունը, ներկաներին մաղթեց խաղաղ երկինք և արևշատ օրեր:

Սուրբ Գևորգ եկեղեցում կայացած Սրբազան Պատարագի ջերմ և առինքնող մթնոլորտը տեղափոխվեց նաև Վիրահայոց թեմի հովանու ներքո գործող «Խրիմյան հայրիկ» նախակրթարանի պատերից ներս, որտեղ հավաքվել էին Արագովայից և շրջակա գյուղերից այստեղ հաճախող երեք տասնյակից ավելի սաներն իրենց ծնողների հետ: Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նախակրթարանի մանկավարժներին, կարևորեց երեխայի անձի ձևավորման, զարգացման, կրթության և դաստիարակության գործում ուսուցիչների և ծնողների ունեցած դերը:



Թեմակալ առաջնորդի այցելությունը երեխաներին դատարկաձեռն չէր: Նախակրթարանի սաներին պարգևելով անակնկալի ուրախությունը, Վազգեն Սրբազանը երեխաներին բաժանեց Ամանորյա և Սուրբ Ծննդյան նվերներ: Գերմանիայի քրիստոնյա համայնքների ուղարկած «Նվեր ընկերոջս» տուփերը մեծ ոգևորություն առաջացրեցին երեխաների մոտ, ուրախ տրամադրությունը փոխանցվեց նաև առաջնորդին և ներկա գտնվողներին:





Հայաստանի Հանրապետության Սոցիալիստիկ Դեմոկրատիկ Մասին



Հայաստանի Հանրապետության Սոցիալիստիկ Դեմոկրատիկ Մասին